ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ՝ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

11.03.2020 13:01

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ փաստաբանների պալատը հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով կազմակերպում է քաղաքացիներին անվճար իրավաբանական օգնության տրամադրում, ինչով պայմանավորված յուրաքանչյուր օր ընդունում է բազմաթիվ քաղաքացիների՝ ՀՀ փաստաբանների պալատը նախագահը կորոնավիրուսի հետ կապված քաղաքացիների և աշխատակազմի առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով դեռևս 28.02.2020 թվականից ստեղծել է պատասխանատու ժամանակավոր խումբ և ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում և մարզային գրասենյակներում աշխատակիցների համար ապահովվել է համապատասխան ախտահանիչ և կանխարգելիչ միջոցներ:

Միաժամանակ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 2020 թվականի փետրվարի 28-ին, դիմել է ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին, խնդրելով՝

- տրամադրել կորոնավիրուսից պաշտպանող առնվազն 200 դիմակ.

- **իրազեկել, թե ի՞նչ պաշտպանիչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել վիրուսով վարակման վտանգը նվազեցնելու համար:**

Առ այսօր՝ նախարարին դիմելուց 11 օր անց, ՀՀ առողջապահության նախարարությունից փաստաբանների պալատը ստացել է պատասխան միայն բժշկական դիմակներ տրամադրելու անհնարինության վերաբերյալ:

Առողջապահության նախարարությունը **չի պատասխանել այն հարցին**, թե ***ի՞նչ պաշտպանիչ միջոցառումներ է անհրաժեշտ իրականացնել վիրուսով վարակման վտանգը նվազեցնելու համար:***

ՀՀ փաստաբանների պալատն առողջապահության նախարարությանը գրությամբ դիմելով՝ ակնկալում էր, որ նախարարությունն օպերատիվ կարգով գրությամբ կամ առնվազն մասնագետի միջոցով խորհուրդներ կտա, թե ի՞նչ միջոցառումներ պետք է իրականացնել քաղաքացիների մեծ հոսք ունեցող կազմակերպությունում՝ վտանգը նվազեցնելու համար:

Նշվածի հաշվառմամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահը 11.03.2020թ. դիմել է ՀՀ վարչապետին կորոնավիրուսի հետ կապված քաղաքացիների մեծ հոսք ունեցող կազմակերպություններում կամ մարմիններում իրազեկման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.03.2020թ. գրությունը.

Առաջարկվող նորություններ

18.03.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՁԵՌՆԱՐԿԵԼ Է ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ)

24.03.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ

01.04.2020ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԴԻՄԵԼ Է ՊԱՐԵՏԻՆ՝ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՎ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

06.10.2020ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })